«ԷԿԵՆԳ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010,
Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ
Հեռ՝ 060 460405
info@ekeng.am
www.ekeng.am

h. 1256
02.04.2020թ.

«Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ
տնօրեն Վ. Նիկոյանին
ք. Երևան, Կորյունի 6ա
էլ. հասցե՝ info@gsol.am
ՀՎՀՀ 00908278

«ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի և «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-19/15-ԳՍ պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) և դրա հիման վրա 2020 թվականի հունվարի 10-ին կնքված N1 համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) համաձայն՝ վերջինս ստանձնել էր «ԷԿԵՆԳ» ՓԲԸ կարիքների համար ավիատոմսերի ամրագրման և դուրսգրման համար որոնողական էլեկտրոնային հարթակի ներդրման և սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորություն (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող տեխնիկական բնութագրի դրույթների:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետը կետի ա) ենթակետը և 5.2 ենթակետը՝ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ միակողմանի լուծում է պայմանագիրը և Համաձայնագիրը:

Տեղեկացնում ենք, որ «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ պարտավոր է Պայմանագրի 5.2 կետի համաձայն վճարել տուգանք՝ 85860 (ութսունհինգ հազար ութ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, Պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետի համաձայն՝ վերադարձնել վճարված գումարը՝ 477000 (չորս հարյուր յոթանասունյոթ հազար) ՀՀ դրամը: Ինչպես նաև, սույնով տեղեկացնում ենք, որ «Տուժանքի մասին համաձայնագրի» 4-րդ կետի համաձայն՝ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն «Տուժանքի մասին համաձայնագիրը» և դրան կից Պահանջագիրը ներկայացնում է Վճարող Բանկ՝ 1.717.200 (մեկ միլիոն յոթ հարյուր տասնյոթ հազար երկու հարյուր) ՀՀ դրամը որպես Պայմանագրի կատարման ապահովում ստանալու համար:

Հարգանքով՝
«ԷԿԵՆԳ» ՓԲԸ
Տնօրեն
Լ. Ավետիսյան

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պայմանագրի անվանումը՝ **«ԷԿԵՆԳ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎԻԱՏՈՄՍԵՐԻ ԱՄՐԱԳՐՄԱՆ ԵՎ ԴՈՒՐՍ ԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՐՈՆՈՂԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԹԱԿԻ ՆԵՐԴՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

Պայմանագրի կնքման ամսաթիվ՝ *12 դեկտեմբերի 2019թ.*

Պայմանագրի համար՝ *N ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-19/15-ԳՍ*

Պատվիրատու՝ *«ԷԿԵՆԳ» ՓԲԸ*

Պայմանագրի կողմ՝ *«ԳԼՈԲԱԼ ՍՈԼՈՒՇՆ» ՍՊԸ*

	Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների					
	Անվանումը	Տեխնիկական բնութագրի շարադրանքը	Քանակական ցուցանիշը		Կատարման ժամկետը	
			Ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	Փաստացի	Ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	Փաստացի
	Ավիատոմսերի ամրագրման և դուրս գրման համար որոնողական էլեկտրոնային հարթակի ներդրման և սպասարկման ծառայություններ	Էլեկտրոնային հարթակը (այսուհետ՝ Հարթակ) պետք է ապահովի իրեն համակցվող ավիատոմսերի մատակարարման պայմանագրերից բխող գները՝ ներկայացնելով ավիատոմսերի նվազագույն գներից սկսած բոլոր առաջարկները, որոնք էլ պետք է դասակարգված լինեն համաձայն ՀՀ իրավական ակտերով, դրանց փոփոխություններով սահմանված կանոնների: Տեխնիկական բնութագրում հանդիպող հասկացություններ. **Օգտագործվող հասկացություններ** — **Պարզաբանումներ** Որոնողական Էլեկտրոնային Հարթակ (Հարթակ) — Միասնական պատուհանում (ինտերֆեյսում) օնլայն ամրագրման ծառայություններ իրականացնելու ավտոմատացված էլեկտրոնային միջավայր Օգտատեր — Հարթակին հասանելիություն ունեցող ֆիզիկական անձ, որի մուտքի հնարավորությունը ամրագված է տվյալ կառույցի և «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-				-

				ի միջև կնքված պայմանագրով:					
			Ադմինիստրատոր	Այն օգտատերն է, որը հասանելիություն ունի Հարթակի բոլոր մակարդակներին, կարող է դիտել Հարթակի բոլոր օգտատերերի գործողությունները, ապահովի կարգաբերումները՝ համաձայն գնային քաղաքականության, արգելափակի կամ միացնի այլ օգտատերերի հասանելիությունները, ավելացնի նոր օգտատերեր					
			Օպերատոր	Այն օգտատերն է, որն ունի Հարթակում պատվերների ստուգման, թույլատրելի փոփոխությունների կատարման, ճշգրտման, ճամփորդական քաղաքականության կանոնների հետ համաձայնեցման գործառույթների հասանելիություն պատվերների ձևակերպման, փոփոխության, չեղարկման գործառույթների հասանելիություն:					
			Ամրագրող 1	Այն օգտատերն է, որն ունի Հարթակում Ամրագրող 2-ի կողմից ընտրված ավիատոմսերի հաստատման գործառույթի հասանելիություն:					
			Ամրագրող 2	Այն օգտատերն է, որն ունի Հարթակում ավիատոմսերի որոնման, ընտրման և Ամրագրող 1-ին հաստատման ուղարկելու գործառույթների հասանելիություն:					
			Հաճախորդ	Անձ, որի համար Հարթակում իրականացվում է ավիատոմսերի որոնում և ամրագրում:					
			Ամրագրում	Հարթակում ավիատոմսերի ներկայացված տարբերակներից հաճախորդի համար անհրաժեշտ ավիատոմս(եր)ի ամրագրում:					
			Դուրսգրում	Ամրագրող 1-ի կողմից Հարթակում ամրագրված ավիատոմսերի ձևակերպում (դուրսգրում):					
			Պրոֆայլներ	Հաճախորդի ավիատոմսերի ամրագրման և դուրսգրման համար անհրաժեշտ					

	անհատական տվյալների գրանցամատյան:
Ճամփորդական քաղաքականություն (կանոններ)	ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով կարգավորվող այնպիսի չափորոշիչներ, որոնցով սահմանվում են պետական մարմինների աշխատակիցների համար ավիատոմսերի ամրագրումների և դուրս գրման որոշակի պայմանները, կանոնները, արտոնությունները և սահմանափակումները: Ճամփորդական քաղաքականությունը ենթակա է փոփոխման՝ ՀՀ օրենսդրության և այլ իրավական ակտերի փոփոխման դեպքում:
Հարթակի խափանում	Օգտատերերի կողմից Հարթակի մուտքի հնարավորության բացակայությունը (բացառությամբ Պատվիրատուի կողմից համաձայնեցված դեպքերի), սահմանափակումը, ինչպես նաև դրանից օգտվելու ընթացքում աշխատանքային վիճակի ցանկացած խոչընդոտ:

1. Տեխնիկական պահանջներ

1. Հարթակը պետք է տեղադրվի Պատվիրատուի կողմից հատկացված հատուկ դոմենային տիրույթում (GOVTRAVEL.AM):
2. Հարթակը պետք է հասանելի լինի դոմենային տիրույթից՝ հիմնական բրաուզերների (Օր. MOZILLA, EXPLORER, CHROME) միջոցով մուտք գործելու հնարավորությամբ:
3. Հարթակը պետք է ներդրվի և շահագործվի Կատարողի կողմից տրամադրվող ապարատային կամ տեղեկատվական հզորությունների վրա, իսկ Կատարողը պետք է ամբողջապես ստանձնի Հարթակի աշխատունակության և անխափան շահագործման պատասխանատվությունը:

4.Տեխնիկական սպասարկման ընթացքում Կատարողի մասնագետները պարտավոր են վերացնել հարթակի խափանման հետ կապված խնդիրները, իսկ նման հնարավորության բացակայության դեպքում ներգրավվեն այլ մասնագետներ՝ անմիջապես տեղեկացնելով և համաձայնեցնելով Պատվիրատուի հետ: Պատվիրատուն կարող է նման դեպքում պահանջել իր մասնագետի ներկայությունը:

5.Պատվիրատուն կարող է սահմանել ողջամիտ ժամկետ՝ առաջացած խնդիրները լուծելու համար: Եթե նշված ժամկետներում խնդիրը չի լուծվում, ապա Պատվիրատուն կարող է լուծել պայմանագիրը:

6. Պայմանագրի գործողության ժամկետում Կատարողի նախաձեռնությամբ Հարթակի արդիականացումը, փոփոխումը, աշխատանքային գործընթացի խափանումը կարգավորվում է 1.4 կետով՝ Կատարողի կողմից և ֆինանսական պարտավորություններ չի առաջացնում

		Պատվիրատուի համար: Ցանկացած փոփոխություն գրավոր պետք է համաձայնեցվի Պատվիրատուի հետ՝ այդ մասին նվազագույնը 7 օր առաջ գրավոր առաջարկություն ներկայացնելով: 7.Կատարողը պետք է ապահովի Օգտատերերի հասանելիությունը Հարթակում՝ Պատվիրատուին տրամադրելով մուտքի անհատական լոգին ու գաղտնաբառ, դրա փոփոխման հնարավորությամբ 8. Կատարողը գրաֆիկական տեսքը (օրինակ՝ միջերեսը, ֆունկցիոնալ կոճակները և այլն) համաձայնեցնում է Պատվիրատուի հետ: 9. Կատարողը պետք է ապահովի Օգտատիրոջ տեսակից կախված տարբեր միջերեսների առկայություն և գործառույթների հնարավորություն: 10. Հարթակը պետք է ապահովի հաճախորդի պրոֆայլի ստեղծման, վարման և պահպանման հնարավորությունները: ***<u>2.Գործառութային պահանջներ</u>*** 2. 1 Հարթակը պետք է ապահովի. • Ավիատոմսերի որոնում, ամրագրում և դուրսգրում • Ավիատոմսի որոնման, ամրագրման և դուրսգրման համար հաճախորդի տվյալների բեռնում հաճախորդի պրոֆայլից • ավիատոմսերի ցուցադրում «մեկ ուղղությամբ» /one way/, «ետդարձով»/round trip/, «բարդ երթուղիով» /multi destinations/ և հնարավոր ցանկացած այլ տարբերակով (օրինակ՝ համակցված ավիատոմսեր և այլն) • Սակագնային կանոնների ծանուցում՝ համապատասխան իրավական ակտին համապատասխան: • Ուղեբեռով և առանց ուղեբեռի չվերթների տարբերակների նշում: Դրանց ավիատոմսին ավելացնելու հնարավորություն: • CO2 արտանետումների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու հնարավորություն ***3. <u>Ծրագրային ապահովում</u>*** 3.1 Հարթակի գործնեությունը պետք է կառուցվի Պատվիրատուի կողմից տրամադրվող ճամփորդական քաղաքականության կանոնների վրա: 3.2 Հարթակում պետք է ինտեգրվեն բացառապես Պատվիրատուի ներկայացրած ավիատոմսերի մատակարարման պայմանագրերը, որոնք կապված են ամրագրման համակարգերի հետ՝ գլոբալ, դիստրիբուցիոն համակարգերը (Amadeus, Sabre, Sirena, ինչպես նաև դրանց համարժեքները), ավիաընկերությունների «մայր համակարգերի» վաճառքի տերմինալները և այլն: 3.3 Պայմանագրերը պետք է ինտեգրվեն Հարթակին և դրանցից ավիատոմսերի գները Հարթակում պետք է լինեն հասանելի ու տեսանելի: 3.4 Պատվիրատուի կողմից ներկայացրած ավիատոմսերի մատակարարման պայմանագիրը (ները) պետք է ինտեգրվեն Հարթակին՝ դրանք ներկայացնելուց հետո առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում կամ դրա անհնարինության դեպքում՝ Կատարողի կողմից պատճառաբանված հիմնավորմամբ սահմանված ողջամիտ ժամկետներում՝ համաձայնեցնելով Պատվիրատուի հետ: 3.5 Հարթակը պետք է համապատասխան օգտատիրոջ համար նախատեսված միջերեսին ներկայացնի բոլոր գները (նվազագույնից մինչև առավելագույն)՝ ըստ ավիափոխադրողների՝ առանձին-առանձին:				

		3.6 Բոլոր մակարդակներում «անձնական գրանցամատյան»-ի ապահովում: 3.7 Հարթակի ցանկացած օգտատիրոջ կողմից ավիատոմսի որոնումների, ամրագրումների և դուրսգրումների վերաբերյալ տեղեկատվության գեներացում և էլեկտրոնային հաշվետվության ապահովում (առնվազն օգտատիրոջ անունը (կցված կառույցը), մուտքի ամսաթիվ և ժամ, որոնման ամսաթիվ և ժամ, փնտրած ուղղություն (ներ), ցուցադրված չվերթներ (առաջարկներ), դրանց գները): 3.8 Ավիատոմսի ամրագրումը հաստատելու պահին միջերեսի սքրիշոթի ներբեռնում համակարգ (համապատասխան օգտատիրոջ անձնական գրանցամատյան) 3.9 Դուրսգրված ավիատոմսերի ներբեռնում համապատասխան օգտատիրոջ անձնական էջ, ինչպես նաև առաքում տվյալ հաճախորդի էլեկտրոնային փոստին: 3.10 Հարթակը պետք է գործի անխափան 24/7 (շուրջօրյա) ռեժիմով: ***4. <u>Հասանելիության ապահովում</u>*** 4.1 Կատարողը պետք է ապահովի օգտատերերի հետևյալ հասանելիության մակարդակները և գործառույթների կատարման հնարավորությունը: **Ամրագրող 2-ի համար պետք է ապահովի՝** • Տոմսի որոնում ըստ չափորոշիչների, • Անձնական գրանցամատյանի վարում, • Պրոֆայլների ստեղծում, • Տոմսի ամրագրում, • Ամրագրման փոփոխություն: **Ամրագրող 1-ի համար պետք է ապահովի՝** • Ամրագրող 2-ի կողմից ավիատոմսի ամրագրման դիտում, հաստատում կամ մերժում, • Անձնական գրանցամատյանից օգտվելու հնարավորություն, • Պրոֆայլների հասանելիություն, • Պետք է կարողանա հաստատել ավիատոմսի փոփոխության ամրագրումը (երթուղի, ամսաթիվ, չվերթ, ժամ և այլն), • Պետք է կարողանա հաստատել ավիատոմսի չեղարկման ամրագրումը **Օպերատորի համար պետք է ապահովել՝** • Ամրագրող 1-ի կողմից ուղարկած ամրագրման դիտման, ստուգման, ճանապարհորդական քաղաքականության կանոնների հետ սքրինշոթի տեղեկատվության համեմատման, ինչպես նաև անհամապատասխանությունների առկայության դեպքում Ամրագրող 1-ին ծանուցման հնարավորություն: • Անձնական գրանցամատյանի վարում: • Ամրագրումների ստուգում: • Ամրագրումների (ավիատոմսի) դուրս գրում կամ մերժում: **Ադմինիստրատորի համար պետք է ապահովել՝** • Անձնական գրանցամատյանի վարում, • Օգտատերերի ստեղծում: • Հարթակում առկա բոլոր օգտատերերի (գործող և կասեցված) գործողությունների պատմության դիտում: • Հարթակի ամենաբարձր մակարդակի հասանելիություն: Յուրաքանչյուր կառույցին վերաբերելի պրոֆայլները պետք է հասանելի լինեն տվյալ կառույցի բոլոր օգտատերերին՝ անկախ դրանց փոփոխությունից: ***5. Հաշվետվություններ*** 5.1 Հարթակում պետք է լինի առանձին հաշվետվությունների բաժին, հետևյալ				

		հաշվետվությունների տրամադրման հնարավորությամբ. • Հաշվետվություն 1. «Ավիատոմսերի ձեռքբերման, վերադարձման, չեղարկման և այլ գործողությունների վերաբերյալ ցանկի տրամադրում ըստ մատակարար կազմակերպությունների և ըստ օգտատիրոջ կազմակերպության» (ցանկացած ժամանակահատվածի համար): • Հաշվետվություն 2. «Ավիատոմսերի ամրագրման պահին Հարթակում առկա առաջարկներից նվազագույն և փաստացի ամրագրման գների վերաբերյալ տեղեկատվություն» • Հաշվետվություն 3. Պատվիրատուն պետք է ստանա մատչելի և մանրամասն տեղեկատվություն բոլոր օգտատերերի կողմից Հարթակում ցանկացած գործողության վերաբերյալ (մուտք, ելք, որոնում, ամրագրում, պրոֆայլի ստեղծում, խմբագրում, չեղարկում և այլն): ***6. <u>Արխիվացում</u>*** 6.1 Պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում Հարթակում ստեղծվող տեղեկատվությունը (սքրինշոթեր, անձնական գրանցամատյանների տեղեկատվությունը, ամրագրումների և դուրսգրումների վերաբերյալ տեղեկատվությունը, գործող և գործողությունը դադարեցված օգտատերերի վերաբերյալ տեղեկատվությունը, նրանց գործողությունների մատյանները (լոգեր)) պետք է պահպանվի Պատվիրատուի տրամադրած սերվերային տիրույթում, լինի հասանելի և ընթեռնելի, մատչելի՝ պահպանության անժամկետ պայմանով (հնարավորությամբ): ***7.<u>Այլ պայմաններ</u>*** 7.1 Կատարողը պարտավոր է ապահովել Հարթակից օգտվելու, այն կիրառելու, գիտելիքների և հնարավորությունների ուսուցում՝ Հարթակի օգտատերերի համար: 7.2 Ծրագրային նորությունների և փոփոխությունների վերաբերյալ ձեռնարկների, վիդեոդասընթացների, հեռակա օնլայն խորհրդատվությունների տրամադրում: 7.3 Ուսուցումը կազմակերպվում է Պատվիրատուի կողմից նման պահանջ ներկայացնելուց հետո առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում: 7.4 Ուսուցման ենթակա մասնակիցների ցանկը տրամադրում է Պատվիրատուն:				

ՆՇՈՒՄՆԵՐ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ՝

«ԷԿԵՆԳ» ՓԲԸ և «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ միջև 2019 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-19/15-ԳՍ ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) Հավելված 1-ով սահմանված են **ԷԿԵՆԳ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎԻԱՏՈՄՍԵՐԻ ԱՄՐԱԳՐՄԱՆ ԵՎ ԴՈՒՐՍ ԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՐՈՆՈՂԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԹԱԿԻ ՆԵՐԴՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ** (այսուհետ՝ Ծառայության) տեխնիկական բնութագիրը, որը չի կատարվել 3 ամիս (հունվար, փետրվար, մարտ) շարունակ:

2020 թվականի մարտի 5-ին Կատարողին ներկայացվել է բացասական եզրակացություն և միևնույն ժամանակ տրվել է ողջամիտ ժամկետ (2020 թվականի

մարտի 11) Ծառայությունը պատշաճ կատարելու համար: Կատարողի կողմից 2020 թվականի մարտի 10-ին ժ.15.05 «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ին տրվել է test.govtravel.am դոմենային տիրույթում տեղադրված Հարթակը: Կատարողին գրությամբ կրկին առաջարկ է արվել համատեղ ընդունելու ծառայությունը, եթե այդպիսին կա, (այդ թվում՝ ստուգելու տրամադրված Հարթակի աշխատունակությունը) և ստուգելու դրա համապատասխանությունը տեխնիկական բնութագրին, ինչը Կատարողը կրկին մերժել է՝ այն նպատակահարմար չհամարելով:

Չնայած այն հանգամանքին, որ Հարթակի թերությունների դեպքում այս Ծառայությունը պետք է միանգամից մերժվեր և Պայմանագիրը միակողմանի լուծվեր, մեր կողմից տրվել է ևս մեկ հնարավորություն (արդեն 2-րդ անգամ սահմանելով ողջամիտ ժամկետ)՝ 1-2 օրվա ընթացքում շտկումներ իրականացնելու համար: Ավելին, մեր ընկերության մասնագետները, առանց Կատարողի ներկայության, նրա փոխարեն իրականացրել են Հարթակի փորձարկումներ՝ վերհանելու առկա խնդիրները, թերությունները:

«ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ում տնօրենի հրամանով կազմված հանձնաժողովը, բաղկացած ծրագրավորողներից, տեխնիկական մասնագետներից և տեխնիկական բնութագիրը նախագծած անձից, տեսագրել է և Կատարողին ներկայացրել բազմաթիվ թերություններ: Բացակայել են տեխնիկական բնութագրով նախատեսված մասեր (օրինակ՝ Հաշվետվությունների մասը բացակայում է, Ավիատոմսերի դուրսգրման գործիքակազմը առկա չէ, Ամրագրող 1 և Ամրագրող 2 համար հասանելի չէին ուղևորների ավելացման հնարավորությունները և Հարթակի պատշաճ աշխատանքի հետ կապված այլ դրույթներ), որոնք ներկայացվում են **կից աղյուսակով (Աղյուսակ՝ 2019 թվականի դեկտեմբերի 12-ին հ. ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ 19/15-ԳՍ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրի կատարման վերաբերյալ), ինչպես նաև Ծառայությունը պատշաճ չկատարելու վերաբերյալ առկա են տեսաձայնագրություններ**.

Ծառայությունը 01.04.2020թ. դրությամբ	https://drive.google.com/file/d/1A7jnAcJpMVp3zOIyeYDJ8Cq2BmDgQOlZ/view?usp=sharing
Ծառայությունը 17.03.2020թ. դրությամբ	https://drive.google.com/file/d/1iZZrCtDhoWQPg4T5ZhlcYyoISimdmYoj/view?usp=sharing https://drive.google.com/file/d/1w-vqYeh0sX_lhg4DoTsYTLr7xvdMqwd6/view?usp=sharing https://drive.google.com/file/d/1C5QvDvXQCIDZz6WO2N3aNJLPGG8ftJ_Q/view?usp=sharing https://drive.google.com/file/d/12nWTTvQGm0qY0hgoJo0yItBwxt3OYVJb/view?usp=sharing
Ծառայությունը 10.03.2020թ. դրությամբ	https://drive.google.com/file/d/11h1L46hhEvYqk7IqJtTqcAxKTEXj7RoP/view?usp=sharing

«ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն, չնայած սահմանել է 2 անգամ ողջամիտ ժամկետ Ծառայությունը պատշաճ կատարելու համար, այնուամենայնիվ, չի ստացել պատշաճ

Ծառայություն՝ տեխնիկական բնութագրի պահանջներին և ծավալին համապատասխան:

Քանի որ տեխնիկական բնութագիրը մեկ ամբողջականություն է և տարանջատել հնարավոր չէ ըստ առանձին բաղադրիչների, հետևաբար Ծառայությունը համարվում է չկատարված ամբողջապես՝ անկախ գործառույթների մասնակի կատարված լինելու կամ չլինելու փաստից:

Ստորև ներկայացվում է Ծառայության չկատարման վերաբերյալ առավել մանրամասն բացատրություններ՝ կազմված վերոնշյալ հանձնաժողովի կողմից:

Հիմք ընդունելով վերոգրյալը տալիս եմ **բացասական** եզրակացություն:

«ԷԿԵՆԳ» ՓԲԸ
Տնօրենի տեղակալ
Տ. Մարկարյան

Աղյուսակ
2019 թվականի դեկտեմբերի 12-ին հ. ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-19/15-ԳՍ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրի կատարման վերաբերյալ

Տեխնիկական բնութագրով նախատեսված դրույթներ	**Մեկնաբանություն**
1. Հարթակը պետք է տեղադրվի Պատվիրատուի կողմից հատկացված հատուկ դոմենային տիրույթում (GOVTRAVEL.AM):	Տեղադրված է Test.govtravel.am
2. Հարթակը պետք է հասանելի լինի դոմենային տիրույթից՝ հիմնական բրաուզերների (Օր. MOZILLA, EXPLORER, CHROME) միջոցով մուտք գործելու հնարավորությամբ:	Հասանելի է
3. Հարթակը պետք է ներդրվի և շահագործվի Կատարողի կողմից տրամադրվող ապարատային կամ տեղեկատվական հզորությունների վրա, իսկ Կատարողը պետք է ամբողջապես ստանձնի Հարթակի աշխատունակության և անխափան շահագործման պատասխանատվությունը:	«Ապարատային կամ տեղեկատվական հզորությունների» մասով պահանջը ապահովված է, Հարթակի աշխատունակությունը և դրա անխափան շահագործման պատասխանատվությունը Կատարողինն է, սակայն **Հարթակը այդպես էլ հնարավոր չեղավ պատշաճ շահագործել**
4. Տեխնիկական սպասարկման ընթացքում Կատարողի մասնագետները պարտավոր են վերացնել հարթակի խափանման հետ կապված խնդիրները, իսկ նման հնարավորության բացակայության դեպքում ներգրավվեն այլ մասնագետներ՝ անմիջապես տեղեկացնելով և համաձայնեցնելով Պատվիրատուի հետ: Պատվիրատուն կարող է նման դեպքում պահանջել իր մասնագետի ներկայությունը:	-Տես նախորդ նախորդ մեկնաբանությունը

5. Պատվիրատուն կարող է սահմանել ողջամիտ ժամկետ՝ առաջացած խնդիրները լուծելու համար: Եթե նշված ժամկետներում խնդիրը չի լուծվում, ապա Պատվիրատուն կարող է լուծել պայմանագիրը:	Պատվիրատուն արձանագրել է բազմաթիվ խնդիրներ, 2 անգամ սահմանվել է ողջամիտ ժամկետ (այդ թվում՝ բացասական եզրակացությամբ (05.03.2020թ.)) արձանագրված թերությունները շտկելու և Ծառայությունը պատշաճ մատուցելու համար:
6. Պայմանագրի գործողության ժամկետում Կատարողի նախաձեռնությամբ Հարթակի արդիականացումը, փոփոխումը, աշխատանքային գործընթացի խափանումը կարգավորվում է 1.4 կետով՝ Կատարողի կողմից և ֆինանսական պարտավորություններ չի առաջացնում Պատվիրատուի համար: Ցանկացած փոփոխություն գրավոր պետք է համաձայնեցվի Պատվիրատուի հետ՝ այդ մասին նվազագույնը 7 օր առաջ գրավոր առաջարկություն ներկայացնելով:	Նման կարիք չի գրանցվել
7. Կատարողը պետք է ապահովի Օգտատերերի հասանելիությունը Հարթակում՝ Պատվիրատուին տրամադրելով մուտքի անհատական լոգին ու գաղտնաբառ, դրա փոփոխման հնարավորությամբ	Կատարվել է
8. Կատարողը գրաֆիկական տեսքը (օրինակ՝ միջերեսը, ֆունկցիոնալ կոճակները և այլն) համաձայնեցնում է Պատվիրատուի հետ:	Չի իրականացվել
9. Կատարողը պետք է ապահովի Օգտատիրոջ տեսակից կախված տարբեր միջերեսների առկայություն և գործառույթների հնարավորություն:	Բացակայում են բոլոր օգտատերերի գործառույթները ապահովող անհրաժեշտ գործիքները:
10. Հարթակը պետք է ապահովի հաճախորդի պրոֆայլի ստեղծման, վարման և պահպանման հնարավորությունները:	Գործառույթն հասանելի չէ Ամրագրող 1 և Ամրագրող 2 օգտատերերի համար: Այն պարագայում, որ դա հենց այդ օգտատերերի գործիքն է:
2. Գործառութային պահանջներ 2.1 Հարթակը պետք է ապահովի.	

• Ավիատոմսերի որոնում, ամրագրում և դուրսգրում	Ապահոված չէ: Ավիատոմսի դուրսգրման հնարավորությունը (գործառույթը) Հարթակում բացակայում է:
• Ավիատոմսի որոնման, ամրագրման և դուրսգրման համար հաճախորդի տվյալների բեռնում հաճախորդի պրոֆայլից	Կատարված է
• ավիատոմսերի ցուցադրում «մեկ ուղղությամբ» /one way/, «ետդարձով»/round trip/, «բարդ երթուղիով» /multi destinations/ և հնարավոր ցանկացած այլ տարբերակով (օրինակ՝ համակցված ավիատոմսեր և այլն)	Կատարված է
• Սակագնային կանոնների ծանուցում՝ համապատասխան իրավական ակտին համապատասխան:	Իրականացված չէ
• Ուղեբեռով և առանց ուղեբեռի չվերթների տարբերակների նշում: Դրանց ավիատոմսին ավելացնելու հնարավորություն:	Իրականացված չէ
• CO2 արտանետումների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու հնարավորություն	Իրականացված չէ
3. Ծրագրային ապահովում 3.1 Հարթակի գործնեությունը պետք է կառուցվի Պատվիրատուի կողմից տրամադրվող ճամփորդական քաղաքականության կանոնների վրա:	Հարթակը պատշաճ չի աշխատում, հետևաբար այս դրույթի մասով որևէ կարծիք չկա
3.2 Հարթակում պետք է ինտեգրվեն բացառապես Պատվիրատուի ներկայացրած ավիատոմսերի մատակարարման պայմանագրերը, որոնք կապված են ամրագրման համակարգերի հետ՝ գլոբալ, դիստրիբուցիոն համակարգերը (Amadeus, Sabre, Sirena, ինչպես նաև դրանց համարժեքները), ավիաընկերությունների «մայր համակարգերի» վաճառքի տերմինալները և այլն:	Կատարված է Ամադուս համակարգի ինտեգրումը, իսկ 2020 թվականի հունվարին տրամադրած TTN BSP համակարգը ինտեգրված չէ:

3.3 Պայմանագրերը պետք է ինտեգրվեն Հարթակին և դրանցից ավիատոմսերի գները Հարթակում պետք է լինեն հասանելի ու տեսանելի:	Որոնում անելիս գները երևում են:
3.4 Պատվիրատուի կողմից ներկայացրած ավիատոմսերի մատակարարման պայմանագիրը (րերը) պետք է ինտեգրվեն Հարթակին՝ դրանք ներկայացնելուց հետո առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում կամ դրա անհնարինության դեպքում՝ Կատարողի կողմից պատճառաբանված հիմնավորմամբ սահմանված ողջամիտ ժամկետներում՝ համաձայնեցնելով Պատվիրատուի հետ:	2020 թվականի հունվարի 23-ին տրամադրվել է թեստային API Key BSP, որի ինտեգրման վերաբերյալ մեզ ոչինչ հայտնի չէ
3.5 Հարթակը պետք է համապատասխան օգտատիրոջ համար նախատեսված միջերեսին ներկայացնի բոլոր գները (նվազագույնից մինչև առավելագույն)՝ ըստ ավիափոխադրողների՝ առանձին-առանձին	Կատարված է
3.6 Բոլոր մակարդակներում «անձնական գրանցամատյան»-ի ապահովում:	Տեսանելի են բոլոր որոնումները, սակայն ամրագրված, հաստատված, չեղարկված, դուրսգրված և այլ կարգավիճակ ունեցող պատվերները տեսանելի չեն:
3.7 Հարթակի ցանկացած օգտատիրոջ կողմից ավիատոմսի որոնումների, ամրագրումների և դուրսգրումների վերաբերյալ տեղեկատվության գեներացում և էլեկտրոնային հաշվետվության ապահովում (առնվազն օգտատիրոջ անունը (կցված կառույցը), մուտքի ամսաթիվ և ժամ, որոնման ամսաթիվ և ժամ, փնտրած ուղղություն (ներ), ցուցադրված չվերթներ (առաջարկներ), դրանց գները):	Առկա չէ

3.8 Ավիատոմսի ամրագրումը հաստատելու պահին միջերեսի սքրիշոթի ներբեռնում համակարգ (համապատասխան օգտատիրոջ անձնական գրանցամատյան)	Առկա է
3.9 Դուրսգրված ավիատոմսերի ներբեռնում համապատասխան օգտատիրոջ անձնական էջ, ինչպես նաև առաքում տվյալ հաճախորդի էլեկտրոնային փոստին:	Առկա չէ
3.10 Հարթակը պետք է գործի անխափան 24/7 (շուրջօյա) ռեժիմով:	Հարթակը շահագործման չի հանձնվել
4. <u>Հասանելիության ապահովում</u> 4.1 Կատարողը պետք է ապահովի օգտատերերի հետևյալ հասանելիության մակարդակները և գործառույթների կատարման հնարավորությունը:	
Ամրագրող 2-ի համար պետք է ապահովի՝ • Տոմսի որոնում ըստ չափորոշիչների,	Կատարված է
• Անձնական գրանցամատյանի վարում,	Կատարված է մասնակի: Տեսանելի են բոլոր որոնումները, սակայն ամրագրված, հաստատված, չեղարկված, դուրսգրված և այլ կարգավիճակ ունեցող պատվերները տեսանելի չեն:
• Պրոֆայլների ստեղծում,	Կատարված չէ
• Տոմսի ամրագրում,	Կատարված է
• Ամրագրման փոփոխություն:	Կատարված չէ
Ամրագրող 1-ի համար պետք է ապահովի՝ • Ամրագրող 2-ի կողմից ավիատոմսի ամրագրման դիտում, հաստատում կամ մերժում,	Կատարված է
• Անձնական գրանցամատյանից օգտվելու հնարավորություն,	Կատարված է մասնակի:

	Տեսանելի են բոլոր որոնումները, սակայն ամրագրված, հաստատված, չեղարկված, դուրսգրված և այլ կարգավիճակ ունեցող պատվերները տեսանելի չեն:
• Պրոֆայլների հասանելիություն,	Կատարված չէ
• Պետք է կարողանա հաստատել ավիատոմսի փոփոխության ամրագրումը (երթուղի, ամսաթիվ, չվերթ, ժամ և այլն),	Կատարված չէ
• Պետք է կարողանա հաստատել ավիատոմսի չեղարկման ամրագրումը	Կատարված չէ
Օպերատորի համար պետք է ապահովել՝ • Ամրագրող 1-ի կողմից ուղարկած ամրագրման դիտման, ստուգման, ճանապարհորդական քաղաքականության կանոնների հետ սքրինշոթի տեղեկատվության համեմատման, ինչպես նաև անհամապատասխանությունների առկայության դեպքում Ամրագրող 1-ին ծանուցման հնարավորություն:	Կատարված չէ
• Անձնական գրանցամատյանի վարում:	Կատարված չէ
• Ամրագրումների ստուգում:	Կատարված չէ
• Ամրագրումների (ավիատոմսի) դուրս գրում կամ մերժում:	Կատարված է մասնակի: Մերժում կարող է կատարել, բայց դուրս գրում՝ ոչ:
Ադմինիստրատորի համար պետք է ապահովել՝ • Անձնական գրանցամատյանի վարում,	Հարթակում «ադմինիստրատոր» օգտատեր առկա չէ, հետևաբար այդ գործառույթները գնահատել հնարավո չէ:
• Օգտատերերի ստեղծում:	
• Հարթակում առկա բոլոր օգտատերերի (գործող և կասեցված) գործողությունների պատմության դիտում:	
• Հարթակի ամենաբարձր մակարդակի հասանելիություն:	

Յուրաքանչյուր կառույցին վերաբերելի պրոֆայլները պետք է հասանելի լինեն տվյալ կառույցի բոլոր օգտատերերին՝ անկախ դրանց փոփոխությունից:	Ապահոված է
5. ***Հաշվետվություններ***	
5.1 Հարթակում պետք է լինի առանձին հաշվետվությունների բաժին, հետևյալ հաշվետվությունների տրամադրման հնարավորությամբ. • Հաշվետվություն 1. «Ավիատոմսերի ձեռքբերման, վերադարձման, չեղարկման և այլ գործողությունների վերաբերյալ ցանկի տրամադրում ըստ մատակարար կազմակերպությունների և ըստ օգտատիրոջ կազմակերպության» (ցանկացած ժամանակահատվածի համար):	Կատարված չի Հարթակում նման բաժին գոյություն չունի
• Հաշվետվություն 2. «Ավիատոմսերի ամրագրման պահին Հարթակում առկա առաջարկներից նվազագույն և փաստացի ամրագրման գների վերաբերյալ տեղեկատվություն»	Կատարված չի Հարթակում նման բաժին գոյություն չունի
• Հաշվետվություն 3. Պատվիրատուն պետք է ստանա մատչելի և մանրամասն տեղեկատվություն բոլոր օգտատերերի կողմից Հարթակում ցանկացած գործողության վերաբերյալ (մուտք, ելք, որոնում, ամրագրում, պրոֆայլի ստեղծում, խմբագրում, չեղարկում և այլն):	Կատարված չի Հարթակում նման բաժին գոյություն չունի
6. <u>Արխիվացում</u> 6.1 Պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում Հարթակում ստեղծվող տեղեկատվությունը (սքրինշոթեր, անձնական գրանցամատյանների տեղեկատվությունը, ամրագրումների և դուրսգրումների վերաբերյալ տեղեկատվությունը, գործող և գործողությունը դադարեցված օգտատերերի վերաբերյալ	Կատարված չի:

տեղեկատվությունը, նրանց գործողությունների մատյանները (լոգեր)) պետք է պահպանվի Պատվիրատուի տրամադրած սերվերային տիրույթում, լինի հասանելի և ընթեռնելի, մատչելի՝ պահպանության անժամկետ պայմանով (հնարավորությամբ):	
7. <u>Այլ պայմաններ</u> ***7.1*** Կատարողը պարտավոր է ապահովել Հարթակից օգտվելու, այն կիրառելու, գիտելիքների և հնարավորությունների ուսուցում՝ Հարթակի օգտատերերի համար:	Կատարված չի Ինչպես արդեն նշվել էր, «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն հրավիրել էր Կատարողին համատեղ հանձնման-ընդունման գործընթաց կազմակերպելու (2 անգամ), որի ընթացքում կուսուցանվեին նաև Հարթակի «Օպերատոր» և «Ադմինիստրատոր» օգտատերերը:
7.2 Ծրագրային նորությունների և փոփոխությունների վերաբերյալ ձեռնարկների, վիդեոդասընթացների, հեռակա օնլայն խորհրդատվությունների տրամադրում:	Կատարողի կողմից տրամադրվել են տեսաուղեցույցներ՝ փնթի, անորակ, կիսատ, գործառույթների թերի և մասնակի նկարագրությամբ, որոնք կիրառելի չեն ուսուցման համար Տես հղումներ՝ https://drive.google.com/file/d/115krdzVxAYUVcvNihuCSk73gxcfQkG5e/view?usp=sharing https://drive.google.com/file/d/1SqbRokKrQa78BiwT4QKN_LN9OKNW6Ilx/view?usp=sharing https://drive.google.com/file/d/1YPxP2IffT0aUSrRXVS0K_Z9s6c9bD6HT/view?usp=sharing https://drive.google.com/file/d/1kbzkAVHIbzCkw_OvmKfrzSBPZ98YDj6V/view?usp=sharing
7.3 Ուսուցումը կազմակերպվում է Պատվիրատուի կողմից նման պահանջ ներկայացնելուց հետո առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում:	Կատարված չի: Պատճառաբանությունը՝ երկրում կորոնավիրուսի հիվանդացության լայն տարածումն էր:
7.4 Ուսուցման ենթակա մասնակիցների ցանկը տրամադրում է Պատվիրատուն:	-